Ռուս զօրքերը Վալերիան Զուբովի հրամանատարութեամբ — որ կրտսեր եղբայրն էր Պլատոն Զուբովի — շարժուեցին դէպի պարսկական սահմանները: Արդուլեան եպիսկոպոսն եւս հրաւէր ստացաւ մասնակցելու այդ արշաւանքին, որովհետեւ նախ՝ նրա փորձառութիւնն ու ազդեցութիւնը հայ ժողովրդի վրայ անհրաժեշտ էին ռուսական զէնքի յաջողութեան համար. երկրորդ՝ ռուս կառավարութիւնը յոյս ունէր նրա միջոցով «հաստատուն պահել Արարատեան Հայրապետին առ մեզ (այսինքն՝ առ ռուսները) ցոյց տուած անձնուիրութեան մէջ»1):

Արդուլեանը սիրով յանձն առաւ մասնակցելու արշաւանքին, չնայած իր հասակին եւ «տկարացած մարմնին», որովհետեւ կարծում էր — իր ասածին պէս — թէ «այս գործի վերջը Աստծու ողորմութեամբ օգնութիւն եւ ապահովութիւն կը լինի մեր ազգին»: Այդ խորունկ հաւատն ունենալով, նա շտապեց ուղարկել Պլ. Զուբովին իր կազմած տեղեկագիրը Հայաստանի ու սահմանամերձ վայրերի մասին եւ նրանց քարտէսը:

Կրկին, հարիւր մէկերորդ անգամ, բոցավառուեց հայրենիքի ազատութեան յոյսը մելիքների եւ քաղաքական գործիչների սրտերում: Այս անգամ արդէն հայ ժողովրդի դարաւոր երազն իրականանալու մօտ էր եւ ազատութեան արշալոյսը բացուելու վրայ էր...

Ռուս զօրքերը յաղթական հասան մինչեւ Գանձակ, Հայաստանի հողը: Անդամ Ղուկասի նման շատ դդոյշ կաթողիկոսը հազիւ էր կարողանում ծածկել իր ուրախութիւնը, անհամբեր սպասելով նրանց մօտենալուն Էջմիածին:

Սակայն նորից դժբախտութիւնը պայթեց հայ ժողովրդի գլխին եւ «աշխարհիս ամենաօգտակար գործը» — ինչպէս Ղուկաս կաթողիկոսը գրում էր Մադրաս, Շահամիրեանին — նորից խափանուեց: Մեռաւ Եկատերինան (1796 թ.) եւ նրա հետ միասին փակուեց նաեւ հայկական հարցի այս ուշագրաւ շրջանը:

Յաջորդը՝ որդին, Պօղոս կայսրը, բոլորովին այլ քաղաքականութիւն սկսեց: Նա չէր սիրում իր մօրը, որովհետեւ վերջինը նրան քաշուած էր պահում պետական բոլոր գործերից: Նա ատում էր Եկատերինայի արքունիքը, նրան շրջապատող մարդկանց եւ նրա ամբողջ քաղաքականութիւնը — թէ՛ ներքին եւ թէ՛ արտաքին: Նրան թւում էր, որ իր մայրը Ռուսաստանի ամբողջ կառավարութիւնը չէր տանում այնպէս, ինչպէս պիտի տարուէր:

Ուստի դահ բարձրանալով, նա որդեգրեց մէկ բոլորովին հակառակ գործելակերպ եւ հակառակ ուղղութիւն — պետական բոլոր ասպարէզներում: Առաջին հերթին՝ յետ պահանջեց զօրքերը Անդրկովկասից եւ վերջ տուեց իր մօր քաղաքականութեանը:

Ի հարկէ, Անդրկովկասը Պօղոսի եւ նրա յաջորդների օրով դուրս չվտարուեց պետական քաղաքականութեան շրջանակից. նա շարունակում էր մնալ ռուս կառավարութեան մտահոգութեան առարկան, սակայն ո՛չ այնտեղ ազգային անկախ միաւորներ — հայկական եւ վրացական — կազմակերպելու մտքով, այլ Անդրկովկասը նուաճելու, ռուսական մեծ կայսրութեան անբաժան մէկ մասը դարձնելու մտքով:

Այդ քաղաքականութիւնը մասամբ իրագործեց հէնց ինքը Պօղոս կայսրը: Օգտուելով Պարսկաստանում նորից ծայր տուած ներքին խռովութիւններից ու ապստամբութիւններից, նա զօրքեր ուղարկեց եւ գրաւեց ամբողջ Վրաստանն ու Ղարաբաղը:

Այդ քաղաքականութիւնը վերջում ամբողջացաւ Նիկողայոս Ա. կայսեր օրով, Թուրքմէնչայի դաշնադրութեամբ (1828): Երեւանի ու Նախիջեւանի խանութիւնների գրաւումով նախկին պարսկական Հայաստանի մեծագոյն մասը, մինչեւ Արաքս գետը, ընդմիշտ կցւում էր Ռուսաստանին, կազմելով նրա անբաժան մէկ մասը:

Այդպիսով պատմական ասպարէզից վերանում էր պարսկական Հայաստանի ազատութեան հարցը, որը երեք դարից աւելի զբաղեցրել էր հայ քաղաքական միտքը եւ բազմազան ու բազմաթիւ յոյսերի ու հիասթափութիւնների, զոհաբերութիւնների ու տառապանքների աղբիւր հանդիսացել:

1) Եղեան՝ «Ս. Էջմիածնի Յարաբերութիւնները», եր. 27.